ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅ ԱՐՎԵՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ՓԱՆՈՍ ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինանսավորմամբ 2015-ի նոյեմբերի 10-ին և 11-ին գումարեց Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասներորդ նստաշրջանը՝ նվիրված Փանոս Թերլեմեզյանի ծննդյան 150-ամյա հոբելյանին: Երկօրյա նստաշրջանի չորս նիստերում լսվեց 37 զեկուցում, որոնցում ներկայացվեցին արվեստագիտության տարբեր գիտաճյուղեր. կերպարվեստագիտություն, երաժշտագիտություն, թատերագիտություն, ճարտարապետության պատմություն և կինոգիտություն:

Բացման խոսքով հանդես եկավ Արվեստի ինստիտուտի տնօրեն Արարատ Աղասյանը. *«2015 թվականը նվիրված էր Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին: Երիտասարդություն և ցեղասպանություն՝ կարծես անհամատեղելի հասկացություններ են, այդ պատճառով որոշվեց տասներորդ նստաշրջանը նվիրել մեր ականավոր, ճանաչված, դասական նկարիչ Փանոս Թերլեմեզյանի ծննդյան 150-ամյակին: Դա էլ խորհրդանշական էր, այսպես համընկան ցեղասպանության 100-ամյակը և նրա ծննդյան 150-ամյակը: Քանի որ Թերլեմեզյանը հայ ազատագրական պայքարի ակտիվ մասնակիցներից էր, Վանի հերոսամարտի ղեկավարներից, ուստի նրա ստեղծագործությունը, նրա կյանքը, անունը նույնպես կապվում են ցեղասպանության հետ»:*

Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ Արամ Սաթյանը *ասաց, որ նստաշրջանի գործունեությունը դա ճանապարհ է հասկանալ, թե ինչ է կատարվում մեր արվեստում: «Գիտությունը և ստեղծագործական գործունեությունը պետք է զուգահեռ գնան, ժամանակ առ ժամանակ իրար բախվելով. եթե չկա առողջ քննադատություն, ապա չկա լավ արվեստ»,– նշեց Ա. Սաթյանը:*

Նստաշրջանի լիագումար նիստում առաջինը հանդես եկավ Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, Երիտասարդ հայ արվեստաբանների խորհրդի նախագահ, արվեստագիտության թեկնածու Մերի Կիրակոսյանը՝ *«Փանոս Թերլեմեզյանի ստեղծագործական դիմանկարը» զեկուցումով: Բանախոսը դիտարկեց XIX–XX դարերի ականավոր նկարչի ստեղծագործական բազմաժանր ժառանգությունը: Ամփոփ ներկայացվեցին Թերլեմեզյանի արվեստի զարգացման փուլերը, տրվեց արվեստագետի ստեղծագործական դիմանկարը: «Էջմիածնի Շողակաթ*

եկեղեցու վաղ միջնադարյան հորինվածքի վերակազմությունը» զեկուցման մեջ Արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի ավագ գիտաշխատող, ճարտարապետության թեկնածու Արեգ Հասրաթյանը *նկատեց, որ Էջմիածնի «գմբեթավոր դահլիճ» տիպի Շողակաթ եկեղեցին մասնագիտական գրականության մեջ ներկայացվում է որպես XVII դ. հուշարձան: Սակայն 1698 թ. գրված ձեռագիր հիշատակարանում նշվում է, որ այն կառուցվել է հնագույն եկեղեցու հիմքերի վրա: Զեկուցման մեջ արծարծված էր հուշարձանի վաղմիջնադարյան ծավալատարածական հորինվածքի վերակազմությունը Հայաստանի VI–VII դդ. նույնատիպ եկեղեցիների նմանությամբ: Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի տնօրեն, արվեստագիտության թեկնածու* Սարգիս Բալբաբյանը *«Կոմպոզիտոր-կատարող հարաբերությունները երաժշտության մեկնաբանության համատեքստում» զեկուցման մեջ ներկայացրեց վերջին 30–40 տարիների ընթացքում կոմպոզիտոր-կատարող հարաբերությունների փոփոխությունները՝ ընդգծելով ստեղծագործական կապերի ամրապնդումը և դրա ազդեցությունը կոմպոզիտորների ստեղծագործական գործընթացի վրա: Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու* Մարտին Հարությունյանը *«Երևանի Մեսրոպ Մաշտոցի պողոտայի և դրա հարակից շինությունների արտաքին ձևավորումներն ու խնդիրները» զեկուցման մեջ նշեց, որ 1990-ական թվականներին, երբ Հայաստանի մի շարք քաղաքներում սկսեց զարգանալ փոքր և միջին բիզնեսը, զուգահեռաբար սկսվեցին խեղաթյուրվել գլխավոր փողոցների արտաքին տեսքերը, դրանց հարակից շինությունների ճարտարապետական հորինվածքն ու դիզայնը: Խնդիրը, որը տեսանելի է և շարունակվում է մինչ օրս, Երևանը դարձրել է «բազմերանգ» ու հակագեղագիտական երևույթների պատճառ: Ինստիտուտի նույն բաժնի գիտաշխատող, Երիտասարդ հայ արվեստաբանների խորհրդի նախագահի տեղակալ, արվեստագիտության թեկնածու* Լիլիթ Արտեմյանը *«Վահրամ Բաբայանի «Pro e Contra» դաշնամուրային պիեսի կոմպոզիցիոն առանձնահատկությունների և կատարողական մեկնաբանման շուրջ» զեկուցման մեջ վերլուծեց ստեղծագործության տեխնիկական հիմքերի առանձնահատկությունները՝ կատարողական տեսանկյունից գեղարվեստական գաղափարը համապատասխանաբար ներկայացնելու նպատակով: Կոմիտասի թանգարան-ինստիտուտի տնօրեն* Նիկոլայ Կոստանդյանը *«Մարգարիտ Բաբայանը Արմենակ Շահմուրադյանի մասին» զեկուցման մեջ գիտական շրջանառության մեջ դրեց դաշնակահարուհի, երգչուհի, երաժշտագետ, մանկավարժ Մարգարիտ Բաբայանի (1874–1968) հուշերը «հայկական Կառուզո», Փարիզի «Grand-opera»-ի երգիչ Արմենակ Շահմուրադյանի մասին, որոնք պահվում են Ե. Չարենցի անվան գրականության և ար-*

վեստի թանգարանում գտնվող Մարգարիտ Բաբայանի ֆոնդում: Բանախոսը հիմնավորեց, որ այդ զեկուցումը կարդացվել է ոչ թե Շահմուրադյանի հետմահու հոբելյանի առթիվ, ինչպես նշված է ֆոնդում (Մարգարիտ Բաբայանի ֆոնդ, -231), այլ երգչի մահից չորս ամիս առաջ՝ 1939 թ. մայիսի 7-ին տեղի ունեցած նրա հոբելյանական հանդիսության ընթացքում: Երևանի Քրիստափոր Քուշնարյանի անվան արվեստի դպրոցի տնօրեն Էդգար Գյանջումյանը *«Ռոք երաժշտության էկոհոգեբանական առանձնահատկությունները» զեկուցման մեջ ներկայացրեց երաժշտական տեզաուրուսի ձևավորման տեսանկյունից բխող առանձնահատկությունները և կապերը բացահայտող հարցաթերթիկների ամփոփման արդյունքները: Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու* Արսեն Համբարձումովը *դիտարկեց Ա. Վերնոյի «Մայրիկ» (1991), Ա. Էգոյանի «Արարատ» և Տավիանի Եղբայրների «Արտույտների ազարակը» (2007) ֆիլմերը և անդրադարձավ սփյուռքահայ ռեժիսորների ֆիլմերում ցեղասպանության թեմայի օգտագործմանը:*

Առաջին նիստում «Բարձր արվեստ» կերպարվեստի կենտրոնի աշխատակից Իրինա Գարասեֆերյանը *«Լևոն Թութունջյանի արվեստը. համեմատական վերլուծություն» զեկուցման մեջ անդրադարձավ ֆրանսահայ արվեստագետի տարբեր տեխնիկաներով կատարված ստեղծագործություններին, զուգահեռներ անցկացրեց Թութունջյանի երկրաչափական աբստրակցիայի, Վասիլի Կանդինսկու և Պոլ Կլեի տեսական աշխատությունների միջև: Վան-Վասպուրականի զարդահամալիրի գեղարվեստական լուծումների և ռճապատկերային առանձահատկությունների մասին զեկուցման մեջ Արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի հայցորդ* Անի Մխիթարյանը *քննության առավ զարդերի առանցքային բաղադրիչ հանդիսացող զարդամոտիվների գաղափարական բովանդակությունը ու ձևերի մատուցումը: Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու* Գայանե Ամիրաղյանը *«Հայ հոգևոր երգարվեստի Նոր Ջուղայի կամ Հնդկահայոց ավանդույթի որոշ ձայնեղանակային առանձնահատկությունների շուրջ» զեկուցման մեջ անդրադարձավ տարբեր ձայնեղանակների առնչության երևույթին և վերջինիս մասնավոր արտացոլմանը Նոր Ջուղայի երգվածքի շրջանակներում՝ Ակ և Բկ ձայնեղանակների օրինակով: ԵՊՀ դասախոս, արվեստագիտության թեկնածու* Հռիփսիմե Վարդանյանի *զեկուցումը Ռուդոլֆ Խաչատրյանի վաղ շրջանի իրապաշտական ստեղծագործությունների մասին էր: Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի հայցորդ* Սոնա Մակարյանը *գիտական շրջանառության մեջ դրեց մի շարք արխիվային վավերագրեր, այդ թվում՝ ԽՍՀՄ ժողովրդական արտիստ,*

ԽՍՀՄ Մեծ թատրոնի մենակատար Պավել Լիսիցյանի փաստաթղթերը՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան էքստեռն ավարտելու վերաբերյալ: «Երաժշտության հարցերը Արշակ Չոպանյանի «Անահիտ» հանդեսում» զեկուցման մեջ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ասպիրանտ Դավիթ Մելքոնյանը *եզրակացրեց, որ «Անահիտը» XX դարասկզբին մի կողմից նպաստել է հայ երաժշտության քարոզչությանը, մյուս կողմից՝ ներկայացրել Փարիզում հայ երաժշտական կյանքի լիարժեք համապատկերը: Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի հուշարձանների չափագրության և ախտորոշման լաբորատորիայի վարիչ, ճարտարապետության թեկնածու* Դավիթ Նահատակյանի *զեկուցման թեման էր՝ «Քար-աղյուս համադրությամբ որմնաշարերը IX–XIII դդ. հայկական պաշտամունքային ճարտարապետության մեջ»: Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հայցորդ* Սոֆյա Ղազարյանն *անդրադարձավ Կոմիտասի՝ մանուկների համար գրված երաժշտության սակավ հայտնի էջերին:*

Նստաշրջանի երկրորդ օրվա առաջին նիստում Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի հայցորդ Նարե Նադարյանը *«Խաչատուր Իսկանդարյանի խմբաքանդակները» զեկուցման մեջ վերլուծեց քանդակագործի պլաստիկական տարբեր եղանակներով կատարված, կոմպոզիցիոն-տարածական ազատ դասավորությամբ գործերը: Ինստիտուտի նույն բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու* Տաթևիկ Շախկուլյանը *«Սասունցի Դավիթ» էպոսի երգվող հատվածների մեղեդիական ուրվագծերը» բանախոսության շրջանակում ներկայացրեց էպոսի երգվող հատվածների հետազոտությունն ըստ նորագույն տեխնոլոգիաների վերլուծությունների՝ լիարժեքորեն հաստատելով Կոմիտասի տեսությունը՝ հայ երաժշտության հնչյունաշարային առանձնահատկությունների վերաբերյալ: Մատենադարանի թիվ 9422 Ավետարանի մանրանկարների նկարազարդումների ոճին էր վերաբերում ԵՊՀ դասախոս, արվեստագիտության թեկնածու* Սաթենիկ Չուգասզյանի *զեկուցումը: Արվեստի ինստիտուտի թատրոնի բաժնի կրտսեր գիտաշխատող* Անուշ Ասլիբեկյանի *«Դրությունը որպես ձևային հիմք Վիլյամ Սարոյանի «Պինգ պոնգ խաղացողները» փոքր դրամայում» բանախոսության մեջ վերլուծվեց հեղինակի փոքր թատերախաղերը դրության և ներքին դրամատիկական ձևի տեսանկյունից և կարևորվեց Սարոյանի դրամատուրգիան թատերագիտական տեսանկյունից քննելու անհրաժեշտությունը: Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի հայցորդ* Սոնա Հակոբյանը *«Հայոց Մեծ եղեռնի ազդեցությունը Փոլ Կիրակոսյանի կյանքում և արվեստում» զեկուցման մեջ անդրադարձավ հայոց ջարդերին և*

գաղթին նվիրված նկարչի կտավներին: «TRIADA ստուդիան՝ որպես հայկական արդի համակարգչային գրաֆիկական դիզայնի բազմակողմանի ու վառ դրսևորումներից մեկը» բանախոսության մեջ Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի ասպիրանտ Արտակ Աղլամազյանը *քննության առավ եռաչափ գրաֆիկայի ուղղությանը պատկանող գործեր: Ինստիտուտի նույն բաժնի կրտսեր գիտաշխատող* Լիլիթ Հակոբյանն *անդրադարձավ Նիկոլ Գալանդերյանի երրորդ՝ «Հովիվը» օպերային, որի լիբրետոյի համար հիմք է ծառայել Վրթանես Փափազյանի 50 զրույցներից մեկը՝ «Լուր-դա-լուրը»: Բանախոսը կարևորեց օպերայի բեմադրության անհրաժեշտության հարցը: Իրանի երաժշտական մշակույթի համատեքստում հայ կոմպոզիտորների ստեղծագործության մասին էր Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հայցորդ* Շուշան Այվազյանի *զեկուցումը:*

Նստաշրջանի վերջին նիստում Արվեստի ինստիտուտի հայցորդ Մարիաննա Պողոսյանը *ներկայացրեց կիթառահար, կոմպոզիտոր և մանկավարժ, Հայաստանում կիթառային դպրոցի հիմնադիր Էդուարդ Բաղալյանի ստեղծագործական դիմանկարը: Ինստիտուտի կերպարվեստի բաժնի ասպիրանտ* Մարիա Լազարևան *«Երկնային մարմինների պատկերումը Հայկական լեռնաշխարհի բրոնզե գոտիներում» զեկուցման մեջ ներկայացրեց պատկերների խորհրդաբանական և պատկերագրական առանձնահատկությունները: Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ասպիրանտ, Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի* Ասղար Ջանաբի Վահաբը *«Երաժշտությունը Ֆիրդուսու «Շահնամե» պոեմի նկարազարդումներում» զեկուցման մեջ արծարծեց «Շահնամե»-ի երաժշտակատարողական ավանդույթի դրսևորումներն Իրանի հասարակական վայրերում: Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու* Մանե Մկրտչյանն *անդրադարձավ Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոնի պատմությանը, թանգարանային հավաքածուին, ներկայիս գործունեությանը՝ նշելով նաև կենտրոնում առկա խնդիրները: «Տեղ գյուղի Սուրբ Գևորգ եկեղեցին» բանախոսության շրջանակներում Արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի գիտաշխատող, ճարտարապետության թեկնածու* Հրանտ Հովսեփյանն *անդրադարձավ եկեղեցու ծավալատարածական հորինվածքի, հարդարանքի նկարագրությանը և քննական ուսումնասիրությանը: «Հակոբ Պարոնյանի «Բաղդասար աղբար»-ը Արա Բեքարյանի աչքերով» բանախոսության մեջ Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի կրտսեր գիտաշխատող* Շուշանիկ Մուրադյանն *գիտական շրջանառության մեջ դրեց Ա. Բեքարյանի վրձնին պատկանող անտիպ էքիզներ: Արվեստի ինստիտուտի*

հայցորդ, Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի գիտական քարտուղար Անի Գրիգորյանն *ամփոփ ներկայացրեց Պալյան Ճարտարապետական գերդաստանի նորահայտ արխիվային նյութերը, գիտական շրջանառության մեջ դրեց տարաբնույթ կառույցների նախագծեր, կահույքի, ջահերի և այլ հարդարանքի նախագծեր ու էսքիզներ: Արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի հայցորդ* Արմինե Աթոյանը *վերլուծեց հայ կոմպոզիտորական դպրոցի միջին սերնդի նեկայացուցիչ Մարտուն Իսրայելյանի «Միրո և տրտմության խոսքեր» խմբերգաշարը երկսեռ երգչախմբի համար (a cappella, խոսք՝ Վահան Տերյանի) և բացահայտեց կոմպոզիտորի խմբերգային ստեղծագործություններին բնորոշ որոշ առանձնահատկություններ: Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ասպիրանտ, Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի* Սառա Մալեք Մոհամմադիի *զեկուցումը Թեհրանի թատերական համալիրի Ճարտարապետության մասին էր: Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի ասպիրանտ* Անի Աճառյանի *զեկուցումը նվիրված էր Երևանի «Հաղթանակ»-ի թանգարանի ինտերիերի դիզայնին. բանախոսը թանգարանի ինտերիերի դիզայնի վերլուծությունը կատարեց միջազգային օրինակների համատեքստում:*

Նստաշրջանի արդյունքները ամփոփեց Արվեստի ինստիտուտի տնօրենի գիտական գծով տեղակալ Աննա Ասատրյանը:

Նստաշրջանի շրջանակներում նոյեմբերի 17-ին Հայաստանի կոմպոզիտորների տան դահլիճում տեղի ունեցավ «Փանոս Թերլեմեզյանի սիրելի կոմպոզիտորները» խորագրով համերգ, մասնակցությամբ՝ արվեստագիտության թեկնածուներ Լիլիթ Արտեմյանի (դաշնամուր) և Հովհաննես Մանուկյանի (դաշնամուր), ապագա արվեստագետներ Սոնա Մակարյանի (վոկալ), Սոֆյա Ղազարյանի (դաշնամուր), Ասղար Ջանաբի Վահաբի (վոկալ), Մարիաննա Պողոսյանի (կիթառ), Էդգար Գյանջումյանի (դաշնամուր), Էմմա Առաքելյանի (դիրիժոր) և Երևանի Զայնի պահպանման վոկալ-երգչախմբային մասնագիտական դպրոցի երգչախմբի: Հնչեցին Բեթհովենի, Տիգրան Չուխաճյանի, Կոմիտասի, Էդուարդ Բաղալյանի, նաև Հայաստանի կոմպոզիտորների միության անդամներ Հովհաննես Մանուկյանի և Էդգար Գյանջումյանի ստեղծագործություններից: Ներածական ընդգրկուն խոսքով համերգը վարեց Աննա Ասատրյանը:

ԼԻԼԻԹ ԱՐՏԵՄՅԱՆ